Թելադրություն **/10 միավոր/**

Գարնանային արևը փայլեց երկնքում և արթնացրեց անտառի բնակիչներին: Լուսավորվեցին մթին անտառի արահետները: Արևի ճառագայթները սկսեցին խաղալ ծաղիկների և խոտերի վրա նստած ցողի հետ: Բայց գարնանային երկինքը այդպես երկար արևոտ չմնաց: Երկնքում հայտնվեցին ամպեր: Եղանակը փոխվեց: Օդում պտտվում էին փոշու այուները: Անտառն աղմկեց: Անձրևի խոշոր կաթիլները ընկան երկրի վրա: Ամպի որոտը խլացրեց ողջ շրջակայքը: /53 բառ/

Առաջին տարբերակ

1. Տեքստից դու՛րս գրիր 8-րդ նախադասությունը: Ընդարձակի՛ր այդ նախադասությունը *ինչպիսի՞* և *ինչպե՞ս* հարցերին պատասխանող երկրորդական անդամներով: /3 միավոր/

   _____

   _____

2. Գծիկով միացրու՛ բառերի համապատասխան զույգերը: Դրանցով կազմի՛ր և գրի՛ր պարզ համառոտ նախադասություններ: /4 միավոր/

կարապներ	ծաղկել
դյուցազուններ	լողալ
հասկեր	կռվել
փշատենի	ծփալ

   _____

   _____

   _____

   _____

3. Տրված նախադասություններում ստորոգյալի համար գրի՛ր համապատասխան 1-ական երկրորդական անդամ: /3 մավոր/

   Կակաչները բացվում են _____:

Երկրորդ տարբերակ

1. Տեքստից դու՛րս գրիր 6-րդ նախադասությունը: Ընդարձակի՛ր այդ նախադասությունը *ինչպիսի՞* և *ինչպե՞ս* հարցերին պահանջող երկրորդական անդամներով: /3 միավոր/

   _____

   _____

2. Գծիկով միացրու՛ բառերի համապատասխան զույգերը: Դրանցով կազմի՛ր և գրի՛ր պարզ համառոտ նախադասություններ: /4 միավոր/

Գետեր	կառուցել
Արագիլներ	մոնչալ
Վագր	վարարել
Շինարարներ	չվել

   _____

   _____

   _____

   _____

3. Տրված նախադասություններում ենթակայի համար գրի՛ր համապատասխան 1-ական երկրորդական անդամ:

   _____ կակաչները բացվում են գարնանը:

   _____ աղբյուրները ժիր կարկաչում եմ:

   _____ երեխաները խնամում են ծաղիկները:

Թելադրություն **/10 միավոր/**

Ջութակի մեղմ եղանակը խախտեց անտառի անդորրը: Անտառը հուզվեց: Նա ցանկացավ ճեղքել թանձր խավարը, բայց չկարողացավ: Իսկ տղայի ջութակն անընդհատ հնչեցնում էր իր հիասքանչ նվագը: Սև ու մռայլ ամպերը լսում էին սքանչելի ձայները: Նրանք զարմացած էին: Կամաց-կամաց ամպերը ցրվեցին: Ամպերից ազատված արևն էլ իր ոսկեզօծ շողերը տարածեց աշխարհի վրա: /50 բառ/

Առաջին տարբերակ

1. Տեքստում ընդգծի՛ր տրված բառերի հականիշները: /2 միավոր/
   Նոսր, խիտ
2. Տեքստի առաջին նախադասությունից դու՛րս գրիր բազմիմաստ բառեր: Այդ բառը մեկ այլ իմաստով գործածի՛ր նախադասության մեջ: /3 միավոր/
   _____
   _____
3. Բառաշարքից դու՛րս գրիր տրված բառի հականիշը: /3 միավոր/
   Համարձակ, լավատես, հիմար, պղտոր, տգետ, անգետ, անվախ:
   Գիտուն-_____
4. Ո՞ր շարքի բոլոր բառերն են հոմանիշներ: Նշի՛ր ճիշտ պատասխանը: /2 միավոր/

   որոնել, փնտրել, կորցնել
   պակասել, նվազել, փչանալ
   շարել, դարսել, ավելանալ

Երկրորդ տարբերակ

1. Տեքստում ընդգծի՛ր հետևյալ բառերի հականիշները: /2 միավոր/
   Ուրախ, սպիտակ
2. Տեքստի վերջին նախադասությունից դու՛րս գրիր բազմիմաստ բառեր: Այդ բառը մեկ այլ իմաստով գործածի՛ր նախադասության մեջ: /3 միավոր/
   _____
   _____
3. Բառաշարքից դու՛րս գրիր տրված բառի հականիշները: /3 միավոր/

   Ջով, տապ, կոշտ, պինդ, քնքուշ, կոպիտ, սառը, հով:

   փափուկ-_____
4. Ո՞ր շարքի բոլոր բառերն են հոմանիշներ: Նշի՛ր ճիշտ պատասխանը: /2 միավոր/

   նվագ, մեղեդի, մեղմ
   մշուշ, մառախուղ, քամի
   նվեր, ընծա, պարգև

Թելադրություն **/10 միավոր/**

Նապաստակը քնել էր վայրի մոշի թփի տակ: Իմ մոտենալը նա չզգաց: Ես զգույշ մոտեցա, շունչս պահեցի և քարացա: Հանկարծ նապաստակի բեղերը շարժվեցին: Հետո դանդաղ բարձրացան կոր ու գեղեցիկ թարթիչները: Ականջները ցցվեցին, հետևի թաթերը ձգվեցին: Նապաստակի աչքերը լցվեցին մութ սարսափով: Մեկ էլ նապաստակը հանգստացավ, թուլացավ, պառկեց ու ննջեց: Նապաստակին ինձ կոճղի տեղ դրեց: /52 բառ/

Առաջին տարբերակ

1. Տեքստից դու՛ս գրիր առաջին նախադասության ենթական և ստորոգյալը, որոշի՛ր դրանց տրվող հարցերն և գրի՛ր:
   /4 միավոր/
   Ենթակա՝ _____
   Ստորոգյալ՝ _____

2. Տեքստի վերջին նախադասությունում ընդգծի՛ր երկրորդական անդամներ: /2 միավոր/

3. Օգտվելով հարցերից՝ ընդարձակի՛ր տրված նախադասությունները: /4 միավոր/
   (Ինչպիսի՞)_____ գետակը (ինչպե՞ս)_____ խոխոջում է:
   Մուկը (ինչի՞) _____ թելերը կտրում էր (ինչերո՞վ) _____:

Երկրորդ տարբերակ

1. Տեքստից դու՛ս գրիր վերջին նախադասության ենթական և ստորոգյալը, որոշի՛ր դրանց տրվող հարցերը և գրի՛ր: /4 միավոր/
   Ենթակա՝ _____
   Ստորոգյալ՝ _____

2. Տեքստի առաջին նախադասությունում ընդգծի՛ր երկրորդական անդամները: /2 միավոր/

3. Օգտվելով հարցերից՝ ընդարձակի՛ր տրված նախադասությունները: /4 միավոր/

   (Ո՞ր) _____ պապը շրջում էր (ինչպիսի՞) _____ այգում:
   (ի՞նչը) _____ լցվել էր (ինչի՞) _____ բուրմունքով:

Արտագրի՛ր տեքստը՝ լրացնելով բաց թողնված տառերը: /10 միավոր/

Կայարանում կանգ առավ մար___ատար գնա___քը: Էլեկտրական լույսերի տակ փայլում էին կայարանը շր___ապատած եղևնիների զմրու___տե կատարները: Աշնանային երեկո էր: Երիտասար___ բժիշկն ի___ավ գնա___քից: Ար___են տասը տարի էր՝ չէր եղել իր հարազատ ծննդավայրում: Նրա կարոտագին հայա___քը սահեց կանաչ լեռնալանջերով դեպի վեր, որտեղ իր ծննդավայրն էր: Նա շտապում էր բոպե առա___հասնել տուն, որտեղ իրեն էին սպասում ծնողները, քույրերը: /57 բառ/

Առաջին տարբերակ

1. Տեքստում ընգծի՛ր երկու գոյական, որոնց հետ գործածված են ածականները: /2 միավոր/

2. Տրված բառակապակցություններում ընգծի՛ր ածական անունները: Դրանք փոխարինի՛ր հոմանիշներով: /4 միավոր/
   վճիտ աղբյուր- _____
   կայտառ երած- _____

3. Տրված նախադասություններն արտագրի՛ր՝ գոյականներին ավելացնելով համապատասխան ածականներ: /4 միավոր/

   Այգիները շորեր հագան: Մարդիկ հավաքեցին մրգերը:
   _____
   _____

Երկրորդ տարբերակ

1. Տեքստում ընդգծի՛ր երկու գոյական, որոնց հետ գործածված են ածականներ: /2 մաիվոր/

2. Տրված բառակապակցություններում ընգծի՛ր ածական անունները: Դրանք փոխարինի՛ր հոմանիշներով:
   /4 մաիվոր/
   թանկարժեք իր- _____
   զվարթ մանուկ- _____

3. Տրված նախադասությունները արտագրի՛ր՝ գոյականներին ավելացնելով համապատասխան ածականներ: /4 միավոր/
   Մոտակա դաշտով հոսում էր առվակը և ջրում ծաղիկներն ու խոտերը:
   _____
   _____